

Ուղեցույց մասնակիցների համար

Բացատրական բառարանը նշում է. գրադարանը գրքերի հավաքածու է: Տնային գրադարանը հավաքվում է աստիճանաբար, հաճախ պատահաբար, բայց այն կարող է իր տիրոջ մասին շատ բան պատմել:

Իսկ դուք ձեր «հավաքածուն» լավ գիտե՞ք: Գիտե՞ք նրա ստեղծման պատմությունը. ինչպիսի՞ գրքերից է բաղկացած, քանի՞ (մոտավորապես) հրատարակություն է ներառում. թե՞ հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ է ուսումնասիրեք ձեր գրքերի հավաքածուն: Դուք կարող եք հանդես գալ լրագրողի դերում և պատմել ձեր տնային գրադարանի մասին:

Խորհուրդներ.

*ուսումնասիրության արդյունքները կարող եք ձևակերպել՝ հոդվածի, շնորհանդեսի կամ տեսանյութի եղանակով.

*աշխատանքը պետք է համապատասխանի մի քանի պահանջների՝

- ներառի եզակի, ուրույն, անկրկնելի տեղեկություն. հասկանալի է, որ ձեր գրադարանի մասին կարող եք միայն ինքներդ պատմել՝ ո՛չ գրքերում, ո՛չ համացանցում նրա մասին տեղեկություն առայժմ չկա.

- լինի հավաստի, ճշմարտացի.

Ուստի մի՛ ծուլացեք մանրագնին և հանգամանալից ուսումնասիրություն կատարել:

Գունագարդել արդյունքները պետք չէ:

- Պետք է կատարել **ստեղծագործական** աշխատանք, այսինքն՝ անհրաժեշտ են **հնարամտություն, երևակայություն, հնարքներ**: (Տարբեր երեխաների կողմից ստեղծված աշխատանքները չեն կարող նման, առավել ևս միօրինակ լինել. նույնիսկ եթե դուք գրում եք միևնույն առարկայի մասին):

- Այն պետք է ընթերցողի (հանդիսատեսի) համար հետաքրքիր և հասկանալի լինի (այնպիսի պահեր, որոնք պարզ են ձեր և ձեր ընտանիքի համար, կարող են անձանոթների մոտ հարցեր առաջացնել):

- Հետաքրքիր նյութն արժանի է լավ ձևակերպման. դրան ուշադրություն դարձրե՛ք:

Ձեր աշխատանքը պետք է իրականացվի մի քանի փուլով.

Տեղեկության հավաքում և վերլուծություն.

Աշխատանքի ստեղծում.

Ձևակերպում:

Նախ և առաջ մտածե՛ք՝ ի՞նչ գիտեք ձեր գրադարանի մասին, իսկ ինչ հետաքրքիր կլինի իմանալ ձեզ և ձեր ընթերցողներին, և ինչպես ստանալ այդ տեղեկությունը:

Ի դեպ՝ ձեր տնային գրադարանը, հավանաբար, բաղկացած է 3 մասից.

- ձեր անձնական գրքերը, որի հիմնական մասը, հավանաբար, հրատարակվել է 21-րդ դարում.
- ձեր ծնողներին, ավագ եղբայրներին, քույրերին և այլոց պատկանող մանկական գրքերը. հնարավոր է՝ այդ գրքերին դուք ծանոթ չեք:

- մեծահասակներին պատկանող գրքերը. գրադարանի այս մասն ուսումնասիրելու համար անհրաժեշտ կլինի մեծերի թույլտվությունն ու օժանդակությունը:

Իհարկե, ձեր աշխատանքը պետք է հիմնականում նվիրված լինի մանկական տնային գրադարանին, և որպեսզի հեշտ լինի աշխատել, կազմե՞ք հետազոտության նախնական պլան:

Մոտավորապես այսպիսի.

Ի՞նչ պետք է իմանալ	Ինչպե՞ս ստանալ տեղեկություն
Քանի՞ գիրք կա ձեր տնային գրադարանում (ընդամենը և յուրաքանչյուր 3 մասերից մեկում):	Հաշվել (մոտավորապես)
<p>Ինչպիսի՞ հրատարակություններ կան.</p> <ul style="list-style-type: none"> -գեղարվեստական գրականություն -գիտահանրամատչելի գրքեր -ուսումնական հրատարակություններ -տեղեկատու-բացատրական հրատարակություններ (ռուսերեն և օտար լեզուների բառարաններ, տեղեկատուներ, հանրագիտարաններ) և այլն: 	Ստուգել
Ո՞ր հրատարակություններն են ավելի շատ:	Հաշվել (մոտավորապես)
Պարզել՝ գեղարվեստական գրականության ո՞ր ստեղծագործություններն են գերակշռում. <ul style="list-style-type: none"> -հա՞յ, թե արտասահմանյան հեղինակների -ժամանակակի՞ց, թե անցյալ դարերից (XIX կամ XX դար) -առանձին ժանրերի, թեմաների -որոշակի հեղինակի: 	Ստուգել և հաշվել (մոտավորապես)
Եթե ունեք գիտահանրամատչելի գրքեր, ապա ո՞ր գիտությանն են նվիրված:	Ստուգել և հաշվել (մոտավորապես)
Ի՞նչ են ներկայացնում իրենցից ուսումնական հրատարակությունները (ինքնուսույցներ, երաժշտական դպրոցների դասագրքեր և այլն):	Ծանոթանալ և հաշվել (մոտավ.)
Ո՞ր գիտության վերաբերյալ և ի՞նչ տեսակի տեղեկատու հրատարակություններ կան:	Ծանոթանալ և հաշվել (մոտավ.)
Պահպանվե՞լ են գրքեր նախադպրոցական տարիներից. ի՞նչ վիճակում. հետաքրքրի՞ր կլինի կրկին թերթել դրանք. պահպանե՞լ եք արդյոք ինքնուրույն ընթերցած առաջին գիրքը:	Տեղեկանալ
<p>Ինչպե՞ս է համալրվում ձեր անձնական գրադարանը.</p> <ul style="list-style-type: none"> -գրախանութում ընտրում եք մեծերի հետ, -ձեզ նվիրում են (ձեր խնդրանքով կամ ոչ) 	Տեղեկանալ, հիշել, հարցնել մեծերին

Ինչպե՞ս է ստեղծվել տնային գրադարանը (ավագ բարեկամների մանկական գրքեր, մեծերի գրքեր):	Հարցնել մեծերին
Գրքերի ո՞ր մասն էք կարդացել. - այն գրքերից, որ ձեզ են պատկանում, - այն գրքերից, որ մանկության տարիներին պատկանել են ծնողներին:	Ստուգել, հիշել, հաշվել (մոտավորապես)
Գտնել «առանձնահատուկ» գրքեր. - գրքեր, որ համարվում են ընտանեկան նվիրական հուշափրեր (թանկ են հատկապես ձեր ընտանիքի համար), - գրքեր, որ թանկ են անձամբ ձեզ համար, - ամենահին գիրքը ըստ հրատարակության (ոչ թե գրելու տարեթվով), - ընծայագրերով գրքեր (ո՞ւմ, ինչո՞ւ), - հեղինակների ինքնագրերով գրքեր, - ինքնաստեղծ, ձեռագիր գրքեր, ալբոմներ և այլն:	Հարցնել մեծերին, ստուգել
Ի՞նչ վիճակում են ձեր գրադարանի գրքերը. - քրքրված, խզրզված էջերով - միանգամայն նոր, որոնք դեռ չեն բացվել - այլ տարբերակ...	Ստուգել
Հաճա՞խ են օգտագործվում գրադարանի գրքերը. - ձեր - մեծերի կողմից	Հարցնել մեծերին, հիշել

Սա միայն հարցաշարի նմուշօրինակ է: Դուք կարող եք (և պետք է) ստեղծեք նաև ձերը: Սակայն հարցերի պատասխանները գտնել, չի նշանակում ավարտել աշխատանքը: Նախ՝ դուք պետք է վերլուծեք ստացված տեղեկությունը: Հնարավոր է, որ ինչ-ինչ արդյունքներ ձեզ համար բացահայտում լինեն: Օրինակ՝ դուք ձեզ համարում էիք ֆանտաստիկ գրականության երկրպագու, իսկ այդ գրքերը ձեր անձնական գրադարանում շատ քիչ են: Երևի դա բացատրություն ունի, որի մասին արժե գրել: Կարող է պատահել՝ դուք չէիք էլ կոսահում, թե տնային գրադարանը որքան մեծ (կամ փոքր) է: Ի դեպ, հետաքրքիր աշխատանք ստեղծել կարելի է և ոչ մեծ գրադարանի մասին: Օրինակ, բացատրել, թե ինչու տանը գրքեր քիչ կան (գրադարանից եք օգտվում, ոչ ոք ընտանիքում չի կարդում, այլ տարբերակներ):

Երկրորդ՝ փաստերը և նրանց շուրջ մտորումները դուք պետք է հետաքրքիր և հասկանալի մատուցեք: Մանրամասն պատմեք «հատուկ գրքերի» մասին, մի՛ մոռացեք գրել նաև, թե, արդյոք, լավ գիտե՞ք՝ ինչպիսի գրքեր կան ձեր գրադարակներում: Օրինակ, երբ հանձնարարություն եք ստանում որևիցե գիրք կարդալ (կամ թեմատիկ նյութ պատրաստել), դուք սկսո՞ւմ եք տանը փնտրել գիրքը, թե՞ ստույգ գիտեք՝ ունե՞ք այն, թե՞ ոչ. կամ էլ ընդհանրապես չեք հիշում տնային գրադարանի մասին: «Գրադարանի ուսումնասիրություն»-ից հետո ինչ-որ բան փոխվե՞լ է:

Ընթերցողների (հանդիսատեսների) համար հետաքրքիր կլինեն Ձեր մտորումները, հատկապես ձեր գրադարանի մասին ապագայի կանխատեսումները (կպահպանվի՞ այն, կհամալրվի՞ նոր գրքերով, դրանց չե՞ն փոխարինի էլեկտրոնային գրքերը):

Պետք չէ ներառել գրադարանի գրքերի ցանկը և բովանդակությունը, իսկ ընթերցանության և գրադարանների օգտակարության մասին պատմել միայն ձեր կյանքի փաստերի հիման վրա: Հավանաբար դուք կարող եք հետաքրքիր պատմել, ուստի մինչև գրառելը և խմբագրելը որևէ մեկին պատմեք ձեր նյութը (կամ ենթադրեք, որ պատմում եք): Կատարած աշխատանքը նույնպես կարելի է ցույց տալ որևէ մեկին: Այդպիսի «անկախ փորձաքննությունը» ցույց կտա, թե արդյոք այն հետաքրքիր է ընթերցողների համար:

Ցանկալի է, որ այն ըստ արժանվույն ձևակերպվի:

Աշխատանքին վերաբերվե՛ք հարգալից:

Ձևավորման համար օգտագործե՛ք նկարներ և լուսանկարներ (**ձերը, ձեր գրադարանինը, և ոչ թե համացանցից**):

Շարադրանքը պետք է լինի ճշմարտացի, հնարամիտ և հետաքրքիր:

Ստեղծագործական հաջողություն քեզ, սիրելի՛ փոքրիկ: